ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4 - 18

15.11. 2018թ.

Ք. Երևան

ՕՐԱԿԱՐԳ՝

Կապսի ջրամբարի կառուցման «ՋՌՀԿ/Ախուրյան գետ Փուլ 1» ծրագրի շրջանակներում մանրամասն նախագծման խորհրդատուի կողմից մշակված «Մանրամասն վերլուծության և ծրագրի գործողությունների պլանավորման» նախնական հաշվետվության վերաբերյալ եզրակացության տրամադրման հարցը/զեկուցող՝«ՋՏ ԾԻԳ» ՊՀ-ի ջրամբարաշինության ծրագրերի համակարգող Վ.Մկրտչյան/:

N/N	Հանձնաժողովի անդամի ազգանուն, անուն	
1	Թոքմաջյան Հովհաննես – հանձնաժողովի նախագահ	ներկա
2	Դաղբաշյան Կարեն	ներկա
3	Ստեփանյան Դանիել	բացակա
4	Գաբայան Գրիգոր	ներկա
5	Բաղդասարյան Արթուր	ներկա
6	Հարությունյան Խաչիկ	բացակա
7	Բալջյան Պարգև	ներկա
8	Մարգարյան Ալբերտ	բացակա
9	Մարկոսյան Աշոտ	ներկա
10	Միսակյան Էդգար	ներկա
11	Աղաբաբյան Կամո	ներկա
12	Անդրեասյան Ռուբիկ	բացակա
13	Մինասյան Սեյրան	բացակա
14	Դանիելյան Կարինե	ներկա
15	Ջավադյան Յուրի	ներկա
16	Սահակյան Վաչիկ	ներկա
17	Նուրիջանյան Սարգիս	ներկա
18	Գրիգորյան Օֆելյա	ներկա

Քվորում՝ 10, Ներկաների թիվը՝ 13:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ»
ՊԵՏԱԿԱՆ ՄՈՒՏՔԻՆ
ՄՈՒՏՔ No 09/6861-18
«03» դեկտեմբերի 2018 թ.

Հանձնաժողովի նախագահ Հ. Թոքմաջյանը ներկայացրեց նիստի օրակարգը:
Օրակարգի վերաբեյալ հարցեր և առաջարկություններ չեղան:
Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի հարցը ներկայացրեց «ՋՏ ԾԻԳ» ՊՀ-ի ջրամբարաշինության ծրագրերի համակարգող Վ.Մկրտչյանը:

Վ.Մկրտչյանը ներկայացրեց Կապսի ջրամբարի կառուցման «Մանրամասն վերլուծության և ծրագրի գործողությունների պլանավորման» նախնական հաշվետվության ընդհանուր դրույթները: Նախնական հաշվետվության հիմնական նպատակը պլանավորման հաշվետվությունն է: Առաջարկված են նախագծային լուծումներ, և տարբերակների հստակեցումից հետո դրան կհաջորդեն նախնական նախագծման, իսկ հետո՝ վերջնական նախագծման փուլերը: 1-ին փուլում ջրամբարի տարողությունը նախատեսվում է 25՝ հետագա փուլերում 50-60 մլն մ³ հասցնելու հնարավորությամբ:

Հաշվետվությամբ նախատեսվում է պատվարի, շինարարական թունելի կառուցում և գոյություն ունեցող ոռոգման թունելի վերակառուցում: 2-րդ թունելի կառուցման անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ գետն ամբողջությամբ անցնում է ներկայումս գործող թունելով, որը վերանորոգման կարիք ունի: Զեկուցողը նշեց, որ հաշվետվության էլեկտրոնային նյութերը Տեխնիկական հանձնաժողովի աշխատակազմի միջոցով ուղարկվել են հանձնաժողովի անդամներին, որոնք դրանց ծանոթանալուց հետո իրենց մոտ առաջացած հարցերը կարող են ուղղել նախագծողի՝ CES գերմանական ընկերության և ՃՇՀԱՀ-ի ներկայացուցիչներին, թեմայի վերաբերյալ ս/թ դեկտեմբերի 10-11-ը կայանալիք աշխատաժողովի ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ Հ.Թոքմաջյանը առաջարկեց քննարկումը շարունակել ազատ ռեժիմով զեկուցողին հարցերով դիմելու, առաջարկություններ, դիտողություններ անելու և ելույթներ ունենալու միջոցով:

Հանձնաժողովի անդամ Ա.Մարկոսյանը զեկուցողին խնդրեց ներկայացնել ծրագրի ընդհանուր արժեքը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ծրագրի ընդհանուր արժեքը 1-ին փուլի համար կազմում է 60 մլն Եվրո, որից 50 մլն-ը վարկային, իսկ 10 մլն-ը՝ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման միջոցներով:

Հանձնաժողովի նախագահ Հ.Թոքմաջյանը զեկուցողին խնդրեց պարզաբանել, թե որ ծավալի համար է նախատեսվում 60 մլն Եվրոն:

Զեկուցողը ներկայացրեց, որ այս փուլում նախատեսվում է կառուցել 25 մլն մ^3 ծավալով ջրամբար, սակայն հիմքերը կառուցելու համար նախ պետք է որոշվի, թե հետագա փուլերում ինչքան պետք է ավելանա ջրամբարի ծավալը:

Հանձնաժողովի անդամ Գ.Գաբայանը զեկուցողին խնդրեց պարզաբանել գործող թունելի վերանորոգման պարագայում 2-րդ թունելի կառուցման անհրաժեշտությունը:

Զեկուցողը պարզաբանեց, որ 2-րդ թունելի կառուցումը նախատեսվում է անվտանգության նկատառումներով, քանի ու գործող թունելը շահագործվում է արդեն 30 տարի և փլվելու ու պատվարին վնաս հասցնելու վտանգ կա:

Գ.Գաբայանը չհամաձայնեց զեկուցողի պարզաբանմանը, նշելով, որ նախագծողը չունի թունելի վթարայնության զարգացման դինամիկան:

Հանձնաժողովի անդամ Յու.Ջավադյանը իր ելույթում հայտնեց, որ իմաստ չունի ավելորդ շռայլություն թույլ տալ և 60 մլն Եվրո արժեքով կառուցել ընդամենը 25 մլն մ^3, հետագայում լրացուցիչ ծախսերով 50-60 մլն մ^3 ծավալով ջրամբար: Ելույթ ունեցողը հայտնեց, որ համոզված է, որ գները ուռճացված են և աշխատանքները հնարավոր է կատարել կրկնակի էժան գներով: Կապսի ջրամբարի ծավալը պետք է նախատեսել առավելագույնը 25 մլն մ^3 և ջրամբարի հիմնական նպատակը պետք է լինի տարածքի սելավաջրերի հոսքերի կառավարումը: Դրա հետ մեկտեղ առաջարկվում է Շիրակի փոխարեն Թալինի տարածքում կառուցել 83 մլն մ^3 ծավալով ջրամբար, որը կընդունի նաև Կապսի հոսքերը:

Հանձնաժողովի անդամ Գ.Գաբայանը զեկուցողին խնդրեց պարզաբանել, թե որ երկրի նորմերով են կատարված հաշվարկները և առաջարկեց ներկայացնել ջրերի հոսքերի հաշվարկային տվյալները՝ համոզվելու համար, որ հաշվարկները իրոք կատարվել են Հայաստանի Հանրապետությունում գործող նորմերով:

Հանձնաժողովի անդամ Ա.Մարկոսյանը զեկուցողին առաջարկեց ներկայացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորումը, քանի որ դա բացակայում է քննարկման ներկայացրած նյութերում:

Հանձնաժողովի անդամ Օ.Գրիգորյանը նշեց, որ նախնական հաշվետվությունում բացակայում են հիդրոլոգիայի և կայունության հաշվարկները և առաջարկեց դրանք ևս ներկայացնել հանձնաժողովին:

Հանձնաժողովի անդամ Կ.Աղաբաբյանը հանդես եկավ հետևյալ առաջարկություններով և դիտողություններով.

- Հաշվարկներն, ըստ իր կարծիքի, կատարվել են այլ երկրի նորմերով և ստացված տվյալները ուղղակի համեմատվել են Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվային տվյալների հետ և վերցրել են միջինացված տվյալներ, և հիմա հնարավոր չէ ասել, թե որքանով են դրանք ճիշտ:
- Հաշվետվությամբ առաջարկվում է ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի ջրամբարը վերանորոգել, կամ անտեսել դրա գոյությունը և Կառնուտը սնող հոսքերն ուղղել դեպի Կապսի ջրամբար, ինչն անհասկանալի է:
- Կապսի ջրամբարը որպես սելավաջրերի հոսքերը կարգավորող ջրամբար դիտարկելու և այդ ջրերը Թալինի տարածքի ջրամբար տեղափոխելու մասին առառաջարկությունը պետք է հիմնավորվի:

Հանձնաժողովի անդամ Յու.Ջավադյանը վերջին դիտողության վերաբերյալ նշեց, որ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սելավաջրերը Կապսից դեպի Թալինի տարածքում կառուցվելիք ջրամբար տեղափոխելով հնարավորություն է ստեղծվում կառուցելու 25 մեգավատ հզորությամբ էլեկտրական: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ այդ տարածքում ջրամբար կառուցելու դեպքում ամբարված ջրի մի մասը հայտնի պատճառներով ստիպված կլինենք տալ հարևան երկրին:

Հանձնաժողովի նախագահ Հ.Թոքմաջյանը այս առընչությամբ նշեց, որ Կապսի ջրամբարի կառուցման հարցը մեր երկրի անվտանգության հետ կապված քաղաքական հարց է: Դրա կառուցումը պարտադիր է, սակայն անիմաստ է հարցը քննարկել առանց Թալինի տարածքում ջրամբարի կառուցման հարցը քննարկելու:

Հանձնաժողովի անդամ Ա.Մարկոսյանը առաջարկեց ուշադրություն դարձնել կառուցվող ջրամբարի ծավալի ճիշտ ընտրմանը: Անհրաժեշտ է ունենալ համեմատական արդյունավետության ցուցանիշներ և նման տիպի աշխատանքների ընթացքում պետք է համապատասխան մոդելավորում կատարվի, այլապես հանձնաժողովի համար դժվար կլինի քննարկվող հարցի վերաբերյալ ճիշտ եզրակացություն տալ:

Հանձնաժողովի նախագահ Հ.Թոքմաջյանը նիստը եզրափակող ելույթում ևս մեկ անգամ անդրադարձավ Կապսի ջրամբարի կառուցման անհրաժեշտությանը, ներկաներին հորդորելով հարցի կարևորությունը դիտարկել նաև Թուրքիայում իրականացվող լայնածավալ ջրամբարաշինության կոնտեքստում: Հ.Թոքմաջյանը հանձնաժողովի անդամներին առաջարկեց շահագրգիռ քննարկման նպատակով նախապես ներկայացնել իրենց հարցադրումները նախագծողին ներկայացնելու համար, որպեսզի նախագծողները հնարավորություն ունենան դեկտեմբերի 10-11-ին կայանալիք աշխատաժողովին քննարկմանը ներկայանալ պատասխաններով հանդերձ:

Հանձնաժողովը միաձայն **որոշեց.**

1. Ս/թ դեկտեմբերի 10-11-ը կայանալիք աշխատաժողովի ընթացքում Կապսի ջրամբարի կառուցման նախնական հաշվետվության քննարկման նպատակով ՀՀ Ջրային կոմիտեի՝ «ՋՏ ԾԻԳ» ՊՀ-ի միջոցով Կապսի ջրամբարի կառուցման նախագծման խորհրդատուին փոխանցել հետևյալ հարցադրումները.

1.1 ներկայացնել նախնական հաշվետվության կազմման ընթացքում կատարված հաշվարկները.

1.2 հիմնավորել 2-րդ թունելի կառուցման և գործող թունելի վերականգնման անհրաժեշտությունը.

1.3 ներկայացնել մանրամասն տեղեկատվություն, թե բացի հիդրոտեխնիկական կառուցվածքների ակնադիտական հետազոտություններից ինչպիսի հետազոտություններ և փորձարարական աշխատանքներ են կատարվել և ներկայացնել դրանց արդյունքները.

1.4 ներկայացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորումը,

1.5 ներկայացնել ջրամբարի ջրատնտեսական և պատվարի կայունության հաշվարկները.

1.6 ներկայացնել ծրագրի հայկական կողմի մանակիցների եզրակացությունը Հայաստանում գործող նորմերին կատարված հաշվարկների համապատասխանության վերաբերյալ:

2. Հայտարարել ընդմիջում մինչև 10-11.12.2018թ. աշխատաժողովի անցկացումը:

Տեխնիկական հանձնաժողովի նախագահ,
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Հովհաննես Թոքմաջյան

15 նոյեմբերի 2018թ.
քաղ. Երևան